# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ԳԱՀԱԿԱԼՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ

## Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ձեր գահակալության չորրորդ տարեդարձին առթիվ հաճեցեք ընդունել մեր օրհնապահ միաբանության և հավատացյալ ժողովուրդին ջերմագին շնորհավորությունները:

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Բեյրութ
3 նոյեմբեր 1959

---

Ջերմագին շնորհավորանք և բարեմաղթանք Վեհիդ արևշատության և մեր Մայր Աթոռին հավետ պայծառացման համար:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ԸՆՏՐՅԱԼ ՊԱՏՐԻԱՐՔ՝
ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԹՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ՝
ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ստամբուլ
3 նոյեմբեր 1959

---

Վեհափառ Հայրապետի գահակալության չորրորդ տարեդարձի բարեբաստիկ առիթով, հարգանքի և սիրո զգացմունքներով և Վեհափառ Հայրապետի արևշատության և արդյունավետ գործունեության բարեմաղթություններով գեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և գրություններ են ստացվել թեմական առաջնորդներից, ազգային-եկեղեցական իշխանություններից, մտավորականներից, հայրենակցական միություններից, երիտասարդական կազմակերպություններից և ազգային ու օտար ծանոթ դեմքերից:

Սրտագին շնորհակալություններ Վեհափառ Հայրապետի գահակալության չորրորդ տարեդարձի առթիվ ստացված շնորհավորությունների և բարեմաղթությունների համար: